գրիա, անուն նորա տէր աստուածատուր որդի տէր յաղէքսանդրի, նորահաւատ և յոյժ ջերմեռանդ. բայց լուա թէ ի վէնէտիկ է. զի այսպիսի անձինք չուտով գայթակղին ի տեսութենէ այլոց բանից. երկնչիմ, եթէ առ ձեզ է խրատեսցես զնա ի ժամանակիս յայսմիկ ներ պատերազմի. հայրն զորդին ոչ ճանաչէ թէ զնա ի Հռոմ լինի թէ ոչ զտանէ սէր և պատիւ զոր յունի ի մտի, կամ լուեալ է և դառնայ վիրաւորեալ և սառն սրտիւ և այլն ըստ խորագոյն խոհեմութեան Հօրդ։ Դարձեալ վասն մեր Հայր Նիկողոսին կողմանէն որ ի յալիկօռնա բաժանեցաւ յինէն անհնազանդ և ապստամբ գտաւ կրօնին և յուխտին. Ն ամ յեգիպտոս եկաց և ի յայս միջոցիս Դ Ն Ճ մարչիլի ապրանք առեալ է [յ]երկուց վաշխառականաց և յղեալ առ հայր իւր ի լեառն քէսրրվան. և ի վաղջանի փախեաւ յեգիպտոսէ, պատճառելով թէ ժանտաց[աւ]ութիւն գոլ յեգիպտոս և առի զինքն ընդ իս ի Հռոմ. ոչ պատմեաց ինձ և ոչ յումեք յեղբարց. գիր էկ ինձ ի Հռոմ, Գ անգամ ցոյց ետու նմա, ուրացաւ և ասաց թէ ես ուխտեալ կրօնաւոր քահանայ եմ, սուտ գրեն ի վերայ իմ թէ հայրս առևտուր յունի ընդ նոսա, իմ հետ ինչ ունին բան. և ես հաւատացի նմա. և իբրև գիտաց ի յալիկօռնա թէ զնամ ի կողմն եգիպտոսի երկեա[ւ] ի գնալ ընդ իս. և յայնժամ յայտնեալ զանհնազանդութիւն իւր առաջի սահակ, զինէոս եպիսկոպոսաց. ստեփան վարդապետն և տէր յակոբն ներկայ էին. յայնժամ եկի յաստ ճշմարիտ վճռեցի զի տեսի զձեռաց գիրն որ ինքն առեալ և ոչ տեսեալ են զհայրն իւր. խնդրեն յինէն և հասարակաց զդրամ. նախատինք և այպն եղեաք դրեաց մերոյ. մինն յոյն է պարտատէրն իպրահիմ խլաթ կոչեն. և միւսն ֆռանկ է և յունին վկայք. զի յառ[աջ]ադէմ գրեցի Հայրութեանդ վասն անհնազանդութեան և ապստամբութեան ապերախտ հայր նիկօլին, զի խրատեսցես եթէ գայցէ ի վէնէտիկ, զի ես յարգելի ի քահանայական գործոց զի գիտասցէ հայրութիւն քոյ, մինչև դարձցի. ամենայն գործոց չարեաց դարձցի և հատուսցէ զպարտս իւր հոգևոր և մարմնաւոր. լուա ի յոմանց թէ գնալ կամի ի վէնէտիկ. եթէ գայցէ խնդրեմ վասն սիրոյ Եղբայրութեան խրատեսցես զքո հայրական սովորութեամբ՝ կամ գրեսցես նմա ի յալիկօռնայ ի փառս աստուծոյ զի չահեսցի։ Եւ Եղբայրութիւնդ առցես ի քրիստոսէ զվարձն յաւիտենական։ Եւ այլ փորձութիւնք և պատահմունք զանազանք ներքոյ և յարտաքոյ աստուծոյ գոհութիւն։ Ժտեմ լիցի ոչ ձանձրութիւն սրբոյ անձիդ. երկարութիւն գրիս զի ի ներ մահճի գրեցի։ Ով մխիթարութեան սրտի իմոյ տրտմեցելոյ. ներ յայսմ կենի և տուն խորհրդոյ փառք գոհութիւն պատիւ և շնորհակալութիւն պարգևողին շնորհաց. և յանձնեմ զեղբայրդ իմ ի նոյն տուօղին շնորհաց զի եզերեսցէ զվաղջանս և զկեանս մեր ի ներքոյ շնորհաց. և օրհնեալ հասարակութիւնն յարգեմ ողջունեմ մեծաւ սիրով, և ցօնեմ ի վերայ հոգոց և մարմնոց իւրաքանչիւրոց աստիճանի և շնորհի զօրհնութիւն առաքելական կրկախառն փարմամբ և պարարող սիրով. և մնալով միշտ կարօտ մարմնաւորի տեսութեան և վերջացուցանելով զբանս կրկին օրհնութեամբ, և մնամ միշտ պատրաստական ծառայ յարգելի եղբայրութեանդ։

Ամի Տեառն 1744 — *Աբրահամ Պետրոս*

Դեկտեմբերի 3 — *Պատրիարք կոչեցեալ*

ի մեծն յաղէքսանդրեա — *ի սուրբ Գահէն ի վերայ հայոց յուղղափառաց*

Ողջուն և օրհնութիւն մեր սիրելի պարոն խաչիկին....

ՃԼԱ.

Իբրև նմոյշ ժամանակակից Մահառահայ լեզուին՝ հետաքրքրական կը համարինք հետևեալ նամակը, որ պարունակութեան տեսակէտմն ալ զուրկ չէ արդէն կարևորութենէ։